



from the office of the
Diocese of the Armenian Church of America

630 Second Avenue, New York, N.Y. 10016, tel: (212) 686-0710

NEWS:

Հրատարակութեան խնդրանքով

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՐ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

«Տիը Արմինիըն Ռիփորթըր» շաբաթաթերթի Նոյեմբեր 10, 1988ի թիւին մէջ հաղորդագրութիւն մը երեւցած է Ամբիլիասի Կաթողիկոսութեան իշխանութեան ներքին գործող բաժանեալ եղբայրներու Թեմական Խորհուրդին կողմէ՝ ձորնիա Նահանգի Աթլանթա ֆաղափի հայկական համայնքի մասին:

Հաղորդագրութիւնը կը պարունակէ ակնբախ աննշողութիւններ եւ խեղաթիւրումներ: Պարտք կը սեպենք ժամանակագրական կարգով ներկայացնել ճշգրիտ պատկերը Աթլանթայի համայնքային իրադարձութիւններուն:

Աթլանթա ֆաղափին մէջ բնակութիւն հաստատած հայերու հարցով առաջին անգամ հետաքրքրուած է Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանը՝ 1968 թուականի սկիզբները, եւ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի թելադրութեամբ մէկտեղուած եւ Առաջնորդարան ղրկուած է ցանկը շրջանի հայերուն անուններուն եւ հասցէներուն:

Շարունակական թղթակցութեանց որպէս հետեւանք (Տիկ. Էլիզապէթ Մանուկեանի եւ Տիար Հան Խաչիկեանի ջանքով) կազմուած էր աւելի մանրամասն ցանկ մը՝ որ կը հաշուէր 90 ընտանիքներու անուն եւ հասցէ: Բոլոր այս ընտանիքները հրաւիրուած են Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի առաջին պաշտօնական այցելութեան՝ որ տեղի ունեցած է Մարտ 1, 1976 թուականին:

Նորին Սրբազնութիւնը պաշտամունք կատարած է եւ Ս. Հաղորդութիւն մատակարարած ներկայ հաւատացեալներուն: Այս առթիւ կազմուած է Եկեղեցական Յանձնախումբ մը, առեմապետութեամբ Տիար Սէթ Տօրեանի, ենթակայ Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանին:

Առաջին Յանձնախումբին մաս կազմած են Տէր եւ Տիկին Հան Խաչիկեան, Տէր եւ Տիկին Արթին Մկրեան, Արա Տոսթուրեան, Սիմոն Տիպոյեան եւ Քիֆըր Լուսարարեան: Թելադրուած է նաեւ որ Տիկ. Սիրան Մկրեան, Վարազդատ Սարիմեան եւ Կրէյս Հան եւս իրենց օժանդակութիւնը բերեն:

Եկեղեցական Յանձնախումբին պարտականութիւնն էր զանազան ձեռնարկներ կազմակերպել եւ Առաջնորդարանէն հոգեւորականներ խնդրել եկեղեցական

պաշտամունքներ կատարելու համար:

Այնուհետև, Առաջնորդ Սրբազան Հայրը ընդառաջելով Եկեղեցական Յանձնախումբի խնդրանքներում՝ եկեղեցականներ նշանակած է որպես զի այցելեն Աթլանթա եւ Ա. Պատարագ մատուցանեն, քարոզեն ու խորհրդակատարութիւններ ընեն:

1980 թուականին կազմուած է Աթլանթայի Հայկական Մշակութային կազմակերպութիւնը: Այս հաւաքոյթին ներկայ եղած է նաեւ Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Մութաֆեան: 1981 թուականին կազմակերպութիւնը կոչուած է Աթլանթայի Հայկական Մշակութային Անկախ Միութիւն, որում կազմութիւնը ողջունած է Առաջնորդ Գեորգ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, եւ նոյնիսկ օժանդակած անոր ծրագիրներու եւ յայտագիրներու պատրաստութեան:

Պատահած է որ Եկեղեցական Խորհուրդի ատենապետն ու անդամներէն ոմանք եղած են նաեւ վարչութեան ատենապետ եւ անդամ Մշակութային Միութեան:

1984 թուականին Եկեղեցական Խորհուրդի անդամներն էին՝ Արա Տոսթուրեան՝ ատենապետ, Տիկ. Մերի Արեւեան Տիլըն՝ փոխ ատենապետ, Թալին Քեօտեան-Մէյժըր՝ ատենադպիր, Փիքըր Տարեան՝ գանձապահ եւ էտուրրո Տէր Աւագեան, Լեւոն Մարտիան, Մանուէլ Յուսէփեան եւ Պետրոս Ներսէսեան՝ խորհրդակազմներ:

Մայիս 24, 1984 թուակիր նամակով ատենապետ Տիար Արա Տոսթուրեան Առաջնորդ Սրբազան Հօր կը տեղեկացնէ վերոյիշեալ անունները եւ կը յայտարարէ որ այս մարմինը կապուած է Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին, գլխաւորուած Առաջնորդ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կողմէ, եւ որ կը վայելէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանաւորութիւնը: Նոյն նամակով, Տիար Տոսթուրեան խնդրամբ կը ներկայացնէ որ Աթլանթայի Եկեղեցական Խորհուրդը պաշտօնապէս մաս կազմէ Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Յունիս 5, 1984 թուակիր նամակով կը վաւերացնէ Եկեղեցական Խորհուրդի անդամներու նշանակումը եւ Աթլանթայի հայ համայնքը պաշտօնապէս կ'ընդունի որպէս նորակազմ ծուխ մը Առաջնորդարանի հովանաւորութեան ներքեւ:

Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի որոշումով, վերջին քանի մը տարիներուն՝ կարգ մը այլ նորակազմ համայնքներու կարգին, Աթլանթայի Եկեղեցական Խորհուրդը հրաւիրուած է ներկայացուցիչ դրկել Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովներուն:

Աթլանթայի հայ համայնքի խաղաղ կեանքը սկսաւ խոռովիլ երբ Հայկական Մշակութային Անկախ Միութիւնը ուզեց միջամտել եկեղեցական գործերուն, նաեւ ստանձնել եկեղեցականներ հրաւիրելու պարտականութիւնը եւ անտեսել գոյութիւն ունեցող Եկեղեցական Խորհուրդը: Մշակութային որեւէ միութիւն ինքզինքին իրաւունք չի կրնար տալ ներկայացնելու կրօնական համայնք մը, եւ ըստ կամս եկեղեցականներ հրաւիրելու եւ կամ եկեղեցականներու այցելութիւնը մերժելու:

«Տիր Արմինեզն Ռիփորթը»ի մէջ տպուած նոյն հաղորդագրութեան մէջ կ'ըսուի որ 1986 թուականին Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աշնեան հրաւիրուած է Հայկական Մշակութային Անկախ Միութեան վարչութեան կողմէ եւ իր ֆարոգին մէջ ֆաջալիքած է որ համայնքը Միացեալ Նահանգաց մէջ ըլլայ տիպարը միութեան եւ համագործակցութեան:

Արդեօք Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աշնեանը տեղեակ չէ՞ր եւ կամ ոեւէ մէկը չըսա՞ւ իրեն որ արդէն իսկ գոյութիւն ունի պաշտօնական մարմին մը՝ որ հոգ կը տանի համայնքի հոգեւոր կարիքներուն, եւ իր ըրածը ոչ թէ միութիւն՝ այլ նոր բաժանուի յառաջացնել է...: Եւ Աքլանքայի մէջ եւս բաժանեալ Միական Խորհուրդ մը կը նշանակուի Անթիլիասի իշխանութեան ներքեւ գործող Թեմական Խորհուրդի մը կողմէ...:

Ապահովարար Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աշնեան տեղեակ էր Աքլանքայի հայ փոքրաթիւ համայնքին մէջ եկեղեցական պաշտօնական մարմնի գոյութեան մասին, որ օրինաւորապէս կը յանձնաձեռն համայնքի հոգեւոր կարիքները Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանի հսկողութեան ներքեւ: Այնտեղ ուրիշ Միական Խորհուրդի մը նշանակումը Անթիլիասի իշխանութեան ներքեւ գործող «թեմական խորհուրդին» կողմէ՝ բաժանարար արարք մըն է:

Նոյն հաղորդագրութեան մէջ կը մէջբերուի Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ նշանակուած այցելու հովիւ Արժշ. Տ. Վրթանէս Ա. Գեւոյ. Գալայնեանի վերագրուած , իրականութեան չհամապատասխանող, դիտումնաւոր եւ միտքեր պղտորող հետեւեալ խօսքը. «Մենք խառն բանջարեղէն ծախելու գործին մէջ չենք:»

Իրականութիւնը այն է որ երբ կ'առաջարկուի որ Հայկական Մշակութային Անկախ Միութիւնը ստանձնէ եկեղեցականներ հրաւիրելու պարտականութիւնը, անտեսելով արդէն իսկ գոյութիւն ունեցող եկեղեցական Խորհուրդը, Տէր Հայրը կ'ըսէ. «Կանոնականօրէն անկարելի բան մըն է այդ:»

Տէր Վրթանէս համայնքին դրկած է Սեպտեմբեր 26, 1988 թուակիր յայտարարութիւն մը, որուն կցած իր հովուական նամակին մէջ կ'ըսէ. «Ուրախալի նշան մըն է որ համայնքին մէջ կը գործէ Հայկական Մշակութային Անկախ Միութիւն մը, որ կը հոգայ համայնքի ընկերային եւ մշակութային կարիքները: Թէ՛ եկեղեցական Խորհուրդը եւ թէ՛ ես պատրաստ ենք ընձեռնելու ամէն անհրաժեշտ օգնութիւն եւ գործակցութիւն ըստ պահանջի:»

Աքլանքայի փոքրաթիւ համայնքի խաղաղ առօրեան կը ստանայ ձգտեալ վիճակ մը: Ուրիշ ծիսական խորհուրդի մը գոյառումը ռոմնագոյութիւն մըն է, օրինաւորապէս արդէն իսկ հաստատուած իշխանութեան մը գործին միջամուխ ըլլալ մը՝ որ արդարեւ շուարումի եւ անիշխանութեան սերմեր կը ցանէ:

Ահա եկեղեցական անկարգութիւն մը եւս բաժանեալ եղբայրներուն կողմէ, «միութեան եւ համագործակցութեան» թանձր մշուշին մէջ ծրարուած:

ԳԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Նոյեմբեր 23, 1988